թուականն անյայտ. և յետոյ մի ուրիշ տեղ (էջ 91, նոյն), «Անդ Պրոպատիկիի տեսանի հոյակապ եւ գմբեթարդ եկեղեցին, յանուն Յովակիմայ եւ Անանայի եւ տեղի ծնողեանն ամենօրհնեալ կուսին։ Սաղահեսին կարգեալ էր զայն դպրոց. ձեւ եկեղեցոյն է նման եկեղեցեացն Հայոց երեք խորանաւ, եւ երկաթի օղակի վարագուրին Աւագ սեղանոյ կային տակաւին ցմեր ժամանակս ի գլուխ սեանց, պատկեր Աւետեաց դարձեալ ի սիւնսն յաջմէ եւ յահեկի եղծեալ, զոր բարձին շատիւք ի տիրոջն իւրեանց։»

Այս վկայութիւններն անշուշտ համոզիչ են և կը հաստատեն Պրոպատիկէի վանքին ու եկեղեցւոյն հայկական ծագումը։ Համբարձման լերան վրայ և Դամասկոսի դրան մօտ նորագիւտ հայկական գեղակերտ մոզայիքներն՝ որ կը կրեն հայերէն արձանագրութիւններ, ինչպէս նաև նոր պեղումներն ու գիւտերը տակաւ առ տակաւ իրաւունք պիտի տան յիշատակաց արժանի Հայոց Անաստաս վարդապետին՝ որ անձամբ Երուսաղէմ եկած ու ցանկագրած է Հայոց 72 վանքերն ու տեսած անոնց պայծառութիւնը։

Խրիմի պատերազմին հետեւանքով 1861 Նոյեմբեր 1ին Սուլթան Մէճիտ կայսեր կողմէն Ս. Յովակիմ–Աննայի եկեղեցին Ֆրանսայի պարգեւ տրուեցաւ։

Ֆրանսական կառավարութեան կողմէն նոյն հոյակապ եկեղեցին Լավիժերի Կարտինալին կողմէն հիմնուած Ափրիկէի միսիոնարաց ընկերութեան յանձնուեցաւ պահպանութեան համար։ Նոյն ընկերութիւնը եկեղեցիին մէկ կողմը երկու ընծայարաններ հաստատած է յոյն մելքիտներու համար։

Թ. Միհրդատեանց իր «Նկարագիր աղեսից Երուսաղէմի» եռյլն գիրքին մէջ եկեղեցական իշխանութեան կողմէն Յովակիմ–Աննայի հայկական եկեղեցւոյ սեպհականութիւնը չպաշտպանուելուն համար դիտողութիւններ գրած էր, որոնց հակառակ Զամուրճեան պատուելի «Երուսալեմ» հանդէսին միջոցաւ քննադատական յօդուած մը հրատարակած ըլլալով՝ Թ. Միհրդատեանց 1864ին «Դատաւորութիւն դատաւորեանց» անուն գրքոյկով մը կը պատասխանէ անոր. նոյն պատասխանին մէջ Ս. Յովակիմ–Աննայի եկեղեցւոյ հայկական ծագման և ճարտարապետութեան մասին տեղեկութիւններ և ապացոյցներ մէջ բերուած ըլլալով, կարեւոր մասերը նոյնութեամբ կը դնենք հոս, պահելով անոր գրչութեան ոճը։